կամ խաչ եւ ոչ զատկի տօնը տօնեն։ Աստուածականատես է եւ նա բաւական է իբրեւ ականատես. Իյադ կնքեց իւր կնիքով (թուղթը)։ Կը պատմեն, թէ Իյադ պարտաւորեցրեց Ռաքքայի բոլոր երաշխաւորներին չորս դենար վճարել. ըստ (այլ) վկայութեան՝ Օմար գրեց Նորանից յետ Օմայր Ի. Սադին, որ Նորա կառավարիչն էր, պարտաւորեցնել բոլոր տեղի բնակիչներին չորս դենար վճարել, ինչպէս նա արեց Զահաբի (?) բնակչաց հետ։

Իյադ եկաւ Խառան[1] եւ բանակեցաւ Բաջուդդայում,[2] ուղարկելով առաջապահ զօրքը (Խառան), որի առջեւ բնակիչք փակեցին քաղաքի, դռները եւ արտաքսեցին Նորան այնտեղից։ Երբ Իյադ իջեւանեց Բաջուդդայում, Խառանի հեթանոս բնակիչք Նորա մօտ մարդ ուղարկեցին Նորան տեղեկացնելու, որ քաղաքի մի մասը նոցա ձեռքումն է, եւ Նորան խնդրելու, որ նա Ուռհայ գնայ, եւ ինչ հիման վերայ Ուռհայի բնակիչք Նորա հետ խաղաղութիւն կապեն, նոքա գոհ կը մնան (նոյն պայմաններն ընդունելու). իսկ քրիստոնեաների հետ թող նա վարւի այնպէս, ինչպէս նա կամի, մինչեւ նոքա Նորա մօտ կը գան։ Երբ այս լուրը առան քրիստոնեայք, նոքա ուղարկեցին Իյադի մօտ՝ խնդրել Նորանից նոցա նոյն ողորմութիւնն շնորհել, որ նա հեթանոսաց պարգեւեց, եւ հնազանդեցան Նորան։

Իյադ եկաւ Ուռհայ. բնակիչք զօրք գումարեցին Նորա դէմ եւ մի ժամ շարունակ կը նե-

---

տակներ միմեանց զարկելով՝ եկեղեցի կը հրաւիրէ ժողովուրդը։

1 *Κάῤῥαι* (Ptol. V, Strabo XVI), Carrae (Amm. Marc.).

2 Ըստ Jakutի քաղաքս կը գտանի Ռաքքայ եւ Ռասէլայնի (*Ῥισάινα*, Ptol., *Ῥέσαινα*, Steph. Byz. Resaina, Amm. Marc.) մէջ։